ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ 01052798) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպված՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 1-8-րդ չափաբաժինների մասով:

«ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 18.10.2023թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

Գնման ընթացակարգի դիմում-հայտարարության մեջ (հրավերի հավելված 1.1)

- ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված,
- պատվիրատուի անվանումը սխալ է լրացված,

• չափաբաժինները, որոնց համար հայտ է ներկայացրել մասնակիցը, սխալ են լրացված,

• ռուսերեն անվանումը լրացված չէ,

• 1)-ին ենթակետը չի համապատասխանում հրավերի պահանջներին (բացակայում է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը):

• բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Ինչպես նաև, առկա է նշում այն մասին, որ բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հրավերի հավելված 1.3), և մատակարարվող ապրանքների տեխնիկական բնութագիրը լրացված չէ:

Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 41-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետի ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ս.թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում դարձյալ առկա են անճշտություններ, մասնավորապես՝

• 30211220/514 **Սեղանի համակարգիչ (չափաբաժին 1)**

• Տեխնիկական բնութագրում նշված է, որ օպերատիվ հիշողությունը պետք է լինի առնվազն 1 հատ 16GB, իսկ առաջարկվող մոդելում այն 2 հատ 8GB է:

• Առաջարկվող մոդելն ունի առավելագույնը 12 միջուկ, սակայն պահանջվում է նվազագույնը 14 միջուկ:

• Առաջարկվող մոդելի վրա առկա չէ բնութագրում նշված 1 հատ SD 3 հիշողության քարտ կարդացող սարքը:

• Առաջարկվող մոդելի միկրոսխեմաների հավաքածուն չի կարող ապահովել 2 հատ օպերատիվ հիշողություն՝ յուրաքանչյուր ալիքի համար:

• Տեխնիկական բնութագրում նշված է Bluetooth 5.3, մինչդեռ առաջարկվող մոդելինը Bluetooth 5.2 է:

• Տեխնիկական բնութագրով պահանջվում է ներկայացնել 2 արտոնագրված սերվիս-կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում, որոնց տվյալները պետք է ներկայացված լինեն արտադրողի պաշտոնական Վեբ կայքում, որը չի ներկայացվել:

• **30211200/508 Դյուրակիր համակարգիչ (չափաբաժին 2)**

• Տեխնիկական բնութագրում նշված է 2 հատ USB Type-C®, մինչդեռ առաջարկվող մոդելում այն 1 հատ է:

• Տեխնիկական բնութագրով պահանջվում է ներկայացնել 2 Երկու արտոնագրված սերվիս-կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում, որոնց տվյալները պետք է ներկայացված լինեն արտադրողի պաշտոնական Վեբ կայքում, որը չի ներկայացվել:

• **30211290/501 Համակարգչային պլանշետ (չափաբաժին 3)**

• Տեխնիկական բնութագրով նշված է, որ երաշխիքային սպասարկումը պետք է լինի առնվազն մեկ տարի (երաշխիքային սպասարկման ապահովումը պետք է կատարվի արտադրողի Երևան քաղաքում գտնվող պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները)), սակայն Ընկերության կողմից պահանջվող տեղեկատվությունը չի ներկայացվել:

• **30239170/519 Բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային (չափաբաժին 4)**

• Տեխնիկական բնութագրում առաջին էջի տպագրման առավելագույն ժամանակը նշված է 5.5 վայրկյան, իսկ առաջարկվող մոդելի տպագրման առավելագույն ժամանակը կազմում է 6.1 վայրկյան: Առաջին պատճենի տպագրման առավելագույն ժամանակը 6.6 վայրկյան է, իսկ առաջարկվող մոդելինը՝ 6.8:

• Տեխնիկական բնութագրում օպերատիվ հիշողությունը նշված է առնվազն 1GB, իսկ առաջարկվող մոդելում այն 512MB է:

• Չափսերը նշված է 453x464x392մմ ±5, մինչդեռ առաջարկված մոդելինը 430x634x325մմ է:

• Տեխնիկական բնութագրով պահանջվում է երաշխիքային սպասարկման ապահովում ՀՀ-ում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները), որը չի ներկայացվել:

• **30232130/503 գունավոր տպիչներ (չափաբաժին 5)**

• Տեխնիկական բնութագրով պահանջվում է ներկայացնել 2 արտոնագրված սերվիս-կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում, որոնց տվյալները պետք է ներկայացված լինեն արտադրողի պաշտոնական Վեբ կայքում, որը չի ներկայացվել:

• **30232110/506 Լազերային տպիչ (չափաբաժին 6)**

• Տեխնիկական բնութագրում նշված է տպագրվող կրիչների նվազագույն և առավելագույն չափսերը՝ 1-ին դարակ 98x148 մինչև 297x432մմ, 2-րդ դարակ 148x210 մինչև 297x354մմ, մինչդեռ առաջարկվող մոդելինը 1-ին դարակը 76.2x127 մինչև 215.9x355.6մմ է, 2-րդ դարակը 105x148 մինչև 215.9x355.9մմ է:

• Առաջարկվող մոդելում կետերի խտությունը տպագրման դեպքում 600x600 dpi է, մինչդեռ տեխնիկական բնութագրում նշված է 1200x1200dpi:

• Տեխնիկական բնութագրով պահանջվում է ներկայացնել 2 երկու արտոնագրված սերվիս-կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում, որոնց տվյալները պետք է ներկայացված լինեն արտադրողի պաշտոնական Վեբ կայքում, որը չի ներկայացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ հիմք ընդունելով կարգի 42-րդ կետը, և 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

Միաժամանակ, հանձնաժողովը որոշել է նախաձեռնել ընթացակարգ՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում***:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները՝ Պատվիրատուն արձանագրում է, որ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ն՝ կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում իր կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները չի շտկել՝ դրանով իսկ խախտելով ***գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնված պարտավորությունը,*** որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Վարչապետի աշխատակազմի կողմից 23.10.2023թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է հայտարարություն՝ «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարվելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ